ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 01Կ

04 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՂՈՒԿԱՍԻ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 40/22 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի 13/24 և Լերմոնտով փողոցի 19 հասցեում Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց համապատասխան թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների վաճառք իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատիրոջ (գրանցման հասցե՝ ք.Էջմիածին, Խրիմյան Հայրիկ /Չերնիշևսկի/ փող., 4Ա տուն, պետ.գրանցման համար՝ 38.03392 / 2003-06-12, ՀՎՀՀ 52130232) կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի 13/24 և Լերմոնտով փողոցի 19 հասցեներում կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 06.12.2022թ. կազմված թիվ ՀՎ6 արձանագրության և 07.12.2022թ.-ի զեկուցագրի հիման վրա 2022 թվականի դեկտեմբերի 7-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատիրոջ բացակայությամբ, ով պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 06.12.2022թ. կազմված թիվ ՀՎ6 արձանագրությունը և 07.12.2022թ.-ի զեկուցագիրը:
- Azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում հրապարակված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցումը:
- Հանձնաժողովի 20.12.2022թ.-ին և 27.12.2022թ. թիվ 40/22 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի 13/24 և Լերմոնտով փողոցի 19 հասցեներում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների վաճառք:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ին Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի դեկտեմբերի 20-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով ծանուցումն ուղարկվել է Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատիրոջը, սակայն փոստային առաքանին ժամանակին համայնքապետարան ետ չի վերադարձվել:

Հիմք ընդունելով այն փաստը, որ Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատերը պատշաճ չի ծանուցվել՝ վարչական վարույթի վերաբերյալ լսումները հետաձգվել և նշանակվել են 27.12.2022թ-ին, իսկ ծանուցումը հրապարակել է ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում, ուստի Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ

ձեռնարկատերը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի իրավակարգավորմամբ համարվում է պատշաճ ծանուցված:

Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատերը, չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցվել է վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում իրականացնելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Այսինքն՝ Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի 13/24 և Լերմոնտով փողոցի 19 հասցեներում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների վաճառք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասով, 23-րդ և 32-րդ հոդվածներով, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 17-րդ հոդվածներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք **100 000** /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով՝ առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների վաճառք իրականացնելու համար:

2. Նախազգուշացնել Խաչատուր Հովհաննիսյան Ղուկասի անհատ ձեռնարկատիրոջը, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 09Ա

05 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով ՌԴ քաղաքացի Ռեգինա Վագիֆի Ռոսկինայի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ 13.08.2003թ. տրված՝ թիվ 891955 սեփականության իրավունքի վկայականը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 040813BN8DEJ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գ. Ոսկեհատ 12-րդ փողոց թիվ 34 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 034

10 հունվարի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՕԺԱՆԴԱԿ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 2 ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Բեկի փողոցի թիվ 8 տան բնակիչ Մուկաել Բիլբուլի Կիրակոսյանի լիազորված անձ Սիրվարդ Սամսոնի Բաղրամյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Մուկաել Բիլբուլի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 04.11.2022թ. տրված թիվ 04112022-04-0046 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 01.12.2022թ. կատարված չափագրությունը / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Բեկի փողոցի թիվ 8 հասցեում գտնվող 0.0984հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 400քմ /արտաքին 400քմ, ներքին 336.3քմ/ մակերեսով բնակելի տունը, օժանդակ ու տնտեսական շինությունները և ինքնակամ բացված թվով 2 դուռը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Բեկի փողոցի թիվ 8 հասցեում գտնվող 0.0984հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 400քմ /արտաքին 400քմ, ներքին 336.3քմ/ մակերեսով բնակելի տունը, օժանդակ ու տնտեսական շինությունները և ինքնակամ բացված թվով 2 դուռը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր 400քմ /արտաքին 400քմ, ներքին 336.3քմ/ մակերեսով բնակելի տան, օժանդակ ու տնտեսական շինությունների և ինքնակամ բացված թվով 2 դռան օրինականացման համար սահմանված 791 538 / յոթ հարյուր իննսունմեկ հազար հինգ հարյուր երեսունութ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4Ա

« 11 » հունվարի 2023թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ ՖՈՒԿՈՒՇԻՄԱ ՄԱՍԱՆՈՐԻԻՆ «ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի և Էջմիածին քաղաքի ավագանու 18.04.2009թ. թիվ 3 նիստի թիվ 17 որոշման պահանջներով՝ Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանության կողմից իրականացվող մարդասիրական և մշակութային անուրանալի գործունեության, Հայաստանում դիվանագիտական առաքելության իրականացման տարիների ընթացքում հայ ժողովրդին ցուցաբերած մեծ աջակցության, մեր հասարակության խոցելի և կարիքավոր խմբերին օգնելու անխոնջ և գնահատանքի արժանի ջանքերի, ինչպես նաև Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզի վերանորոգման գործում ներդրած անմնացորդ ավանդի համար

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորիին շնորհել «Էջմիածին քաղաքի բարեկամ» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 054

11 հունվարի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 121 տան բնակիչ Սարգիս Նվերի Մուքայելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-1085-0045 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 28.12.2022թ. հաստատված թիվ 9893 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002HBH28BS/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Մ.Մելքոնյան փողոց թիվ 7 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 064

12 հունվարի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀԱՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով <<ԳԵՈՏՈՊ>> ՍՊԸ-ի/ որակավորման վկայական թիվ 0421/ կողմից 17.08.2022թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասի տարածքում գտնվող՝ /հողամասը ներառված է 04-002-1026- ծածկագրով թաղամասում/ 0.4228հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք՝ 5-րդ կարգի վարելահող հողատեսքի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՊԱՊԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 074

12 հունվարի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի Ա. Խաչատրյան փողոցի թիվ 8 տան բնակիչ Հովհաննես Խաչիկի Անդրիասյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Զվարթնոց թաղամասի Ա. Խաչատրյան փողոցի թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02092016-04-0012 տրված՝ 02.09.2016թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002XFKECYN / տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ա. Խաչատրյան փողոց թիվ 8 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 098Ա

12 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մ.Եկմալյան փողոցի թիվ 35 տան բնակիչ՝ Լյուդվիկ Զամանի Պետրոսյանի դիմումը իրեն, Մարտուն Զամանի Պետրոսյանին, Մուշեղ Հրաչի Աղակշյանին, Մուրադ Հրաչի Աղաքշյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 18102022-04-0069 տրված՝ 18.10.2022թ., «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096 / կողմից 19.12.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002LXHXUAA, 04002NAPCEG4, 04002UK3EB4J, 04002CWGBUG6/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Եկմալյան փողոցի թիվ 35 հասցեում գտնվող անշարժ գույքը համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի, բաժանել.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ. Եկմալյան փողոց թիվ 35/1 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ. Եկմալյան փողոց թիվ 35 բնակելի տուն:

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ. Եկմալյան փողոց թիվ 35/2 բնակելի տուն:

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ. Եկմալյան փողոց թիվ 35/3 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 094

12 հունվարի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ա. Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 10 տան բնակիչ՝ Հրաչյա Ալբերտի Հարությունյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 21112022-04-0052 տրված՝ 21.11.2022թ., «Ջիվան Արսենի Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 08.12.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002YBLGXUB, 04002SBKNP9D/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան 2-րդ թաղամասի թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքը համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի, բաժանել.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա. Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 10/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա. Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 10 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ _104

15 հունվարի 2023թ. ք. Էջմիածին

ՏԻԳՐԱՆ ԲՐՈԿԵՐԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Երևան քաղաքի Ն.Ստեփանյան փողոցի թիվ 14 շենքի թիվ 43 բնակարանի բնակիչ Տիգրան Բրոկերի Զաքարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 03022021-04-0042 տրված 03.02.2021թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 24.05.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022PIXGYM/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող 04-002-0252-0015 կադաստրյան ծածկագրով 0.1962հա մակերեսով գյուղատնտեսական հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների և ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 9-րդ և 14-րդ մասերի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 30.11.2022թ. տրված թիվ 1/փ-277 եզրակացությունը, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 28.12.2022թ. թիվ 177 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գտնվող 04-002-0252-0015 կադաստրյան ծածկագրով 0.1962հա մակերեսով գյուղատնտեսական հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:
2. 04-002-0252-0015 կադաստրյան ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 343.6քմ /արտաքին 343.6քմ, ներքին 316.5քմ/ մակերեսով շինությունները ճանաչել օրինական, որի օրինականացման համար սահմանված 1 014 823 /մեկ միլիոն տասնչորս հազար ութ հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 114

12 հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20.10.2022Թ. ԹԻՎ 1936Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 20.10.2022թ. <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը Նվեր Սիրազնիկի Միքաելյանի սեփականությունը համարելու մասին>> թիվ 1936Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.00611հա» /որից 0.00188հա ընդհանուր համատեղ սեփականություն/ բառերի փոխարեն կարդալ նշված «0.00585հա» /որից 0.00162հա ընդհանուր համատեղ սեփականություն/ բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1241

12 նոյեմբերի 2023թ. Է. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱԹԵՆԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Նոր Եվդոկիա /նախկին Կալինինի/ փողոցի թիվ 9 տան բնակիչ Սաթենիկ Վազգենի Նիկողոսյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 21.07.2022թ. հաստատված 4988 և 4989 սեղանամատյանով գրանցված ըստ օրենք ժառանգության իրավունքի և սեփականության իրավունքի վկայագրերի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 19.09.2022թ. կատարված չափագրության, Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի Նոր Եվդոկիա /նախկին Կալինինի/ փողոցի թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Սաթենիկ Վազգենի Նիկողոսյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.0396հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.006հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակություն բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի Նոր Եվդոկիա /նախկին Կալինինի/ փողոցի թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակություն բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.006հա մակերեսով հողամասը համարել Սաթենիկ Վազգենի Նիկողոսյանի /ծնված 09.11.1949թ./ սեփականություն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 134

12 հոկտեմբեր 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.12.2022Թ. ԹԻՎ 2171Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 21.12.2022թ. <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող հողամասը Վազգեն Իշխանի Ոսկանյանի սեփականությունը համարելու մասին>> թիվ 2117Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.0073հա» բառերի փոխարեն կարդալ «0.0041հա» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 144

12 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 281 տան բնակիչ Նաթելա Վարդգեսի Բազոյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք 04.05.2004թ. տրված թիվ 1133757 սեփականության վկայականը, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244 կողմից 25.10.2022թ. կատարված չափագրությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2022TTZQKS / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 281 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 271քմ / 271քմ արտաքին, ներքին 216.8քմ / մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 281 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 271քմ / 271քմ արտաքին, ներքին 216.8քմ / մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր 271քմ / 271քմ արտաքին, ներքին 216.8քմ / մակերեսով բնակելի տան և օժանդակ շինության օրինականացման համար սահմանված 453 383 / չորս հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր ութսուներեք / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 151Ա

12 հունվարի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ա.Մանուկյան թաղամասի թիվ 281 տան բնակիչ՝ Նաթելա Վարդգեսի Բազոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0922-0003 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայական թիվ 1133757 տրված՝ 04.05.2004թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 040023MBNFVB/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ա. Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 281 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 164

12 հունվարի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 30 տան բնակիչ Հովհաննես Գևորգի Այվազյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող Հովհաննես Գևորգի Այվազյանին պատկանող անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքների գրանցման վկայականներ N 1680761 տրված՝ 08.09.2003թ., N739818 տրված՝ 07.08.2003թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002MJ6MU9S/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոց թիվ 22 շենք թիվ 10/1 խանութ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 174

12 հունվարի 2023թ. գ. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ. ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 22 ՇԵՆՔԻ ԹԻՎ 10/1 ՏԱՐԱԾՔԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 3 ԴՌԱՆ, 3 ՊԱՏՈՒՀԱՆԻ, 1 ԲԱՑՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 30 տան բնակիչ Հովհաննես Գևորգի Այվազյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 07.08.2003թ. տրված թիվ 739818 և 08.09.2003թ. տրված թիվ 1680761 սեփականության վկայականները, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.09.2022թ. կատարված չափագրությունը, կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2022R4MWQF / և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002MJ6MU9S , Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 22 շենքի թիվ 10/1 տարածքին կից ինքնակամ կառուցված 20.3քմ մակերեսով կցակառույցի, ինքնակամ բացված թվով 3 դռան, 3 պատուհանի, 1 բացվածքի օրինականացման և օգտագործման նպատակը խանութի փոփոխելու խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 22 շենքի թիվ 10/1 տարածքին կից ինքնակամ կառուցված 20.3քմ մակերեսով կցակառույցը, ինքնակամ բացված թվով 3 դուռը, 3 պատուհանը և 1 բացվածքը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 25 775 / քսանհինգ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ / ՀՀ դրամ:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 22 շենքի թիվ 10/1 տարածքի օգտագործման նպատակը փոփոխել խանութի:
3. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 184

12 դեկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Պռոշյան փողոցի թիվ 14 տան բնակիչ՝ Հայկ Լևիկի Մկրտչյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 01032013-04-0301 տրված՝ 01.03.2013թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.11.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 04002H2XG6KQ, 04002YSVEWJE/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Պռոշյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի, բաժանել.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Պռոշյան փողոց թիվ 14 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Պռոշյան փողոց թիվ 14/1 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 194

12 նոյեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 46 տան բնակիչ Մերոբ Նիկոլայի Ղարամանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Թումանյան փողոցի թիվ 46 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝տեխնիկական անձնագիր տրված՝ 29.03.1991թ., Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 29.11.2022թ. հաստատված թիվ 8991 գրանցամատյանով գրանցված փաստաթղթերի պատկանելիության վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին որոշումը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 040023JWSGVU/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Թումանյան փողոց թիվ 46/2 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 240Ա

12 հունվարի 2023թ. ք. Էջմիածին

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ.Շիրազի փողոցի թիվ 57 տան բնակիչ Խաչատուր Հովագիմի Կիրակոսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 22.10.2012թ. տրված թիվ 22102022-04-0221 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 33 հասցեում գտնվող 0.0405հա մակերեսով հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող 0.0392հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր:

